

4. Հանրապետության համայնքների ջրամատակարարում

2004թ. հունվարի 1-ի դրությամբ կենտրոնացված ջրամատակարարման համակարգում ջրմուղի մագիստրալային ջրատարի, փողոցային, միջթաղային ու միջբակային ցանցերի միագիծ ընդհանուր երկարությունները համապատասխանաբար կազմել են 4944.6, 7288.6 և 1069.7 կմ, որից քաղաքային համայնքներում՝ 3590.8, 4051.3 և 1062.7 կմ:

Ջրմուղի ցանցերի միագիծ երկարություններն ըստ մարզերի, 2003թ.

(կմ)

	Մագիստրալային ջրատար	Փողոցային ցանց	որից՝ կարիք ունեն փոխման	Միջթաղային և միջբակային ցանց
ք.Երևան	743.8	1052.5	867.0	518.6
Արագածոտն	537.0	429.7	204.9	9.0
Արարատ	367.0	1679.0	528.4	14.0
Արմավիր	428.0	618.6	269.6	68.6
Գեղարքունիք	402.7	519.2	242.2	26.3
Լոռի	559.0	673.0	416.0	130.0
Կոտայք	524.0	817.0	489.0	54.0
Շիրակ	607.0	888.0	521.0	79.0
Սյունիք	434.0	322.0	148.0	90.0
Վայոց ձոր	99.1	105.6	41.8	58.2
Տավուշ	243.0	184.0	85.6	22.0
Ընդամենը ՀՀ	4944.6	7288.6	3813.5	1069.7


2003թ. ցանցին տրվել է 585.5 մլն. խոր. մ ջուր (ք.Երևան՝ 403.0 մլն. խոր. մ), որից 271.6 մլն. խոր. մ-ը բարձրացվել է առաջին բարձրացման պոմպերով (ք.Երևան՝ 210.8 մլն. խոր. մ), 313.9 մլն. խոր. մ-ը՝ ինքնահոսքով (ք.Երևան՝ 192.2 մլն. խոր. մ): Ցանցին տրված ջրից 29.4 մլն. խոր. մ-ը ստացվել է այլ կազմակերպություններից, մաքրող սարքավորումներով բաց է թողնվել 16.4 մլն. խոր. մ ջուր:

2003թ. ընթացքում սպառողներին բաց է թողնվել 163.9 մլն. խոր. մ ջուր, այդ թվում իր սպառողներին՝ 149.5 մլն. խոր. մ, այլ սպառողներին՝ 14.4 մլն. խոր. մ ջուր: Իր սպառողներին բաց թողնված ջրից բնակչությանը տրվել է 116.4 մլն. խոր.մ, կոմունալ-կենցաղային և արտադրական կարիքների համար՝ 33.1 մլն. խոր. մ ջուր:


Սպառողներին բաց թողնված ջրի ծավալների բաշխվածությունն ըստ մարզերի, 2003թ.

	Սպառողներին բաց թողնված ջուրը		որից՝ իր սպառողներին	% -ով իր սպառողներին տրված փաստացի ջրի ընդհանուր ծավալից	
	ընդամենը, մլն. խոր. մ	%-ով ընդհանուրից		բնակչությանը	կոմունալ-կենցաղային և արդյունաբերական օբյեկտներին
ք.Երևան	97.4	59.4	83.0	74.4	25.6
Արագածոտն	2.5	1.5	2.5	86.7	13.3
Արարատ	8.6	5.2	8.6	83.7	16.3
Արմավիր	7.5	4.6	7.5	88.8	11.2
Գեղարքունիք	7.2	4.4	7.2	73.9	26.1
Լոռի	7.8	4.8	7.8	87.8	12.2
Կոտայք	9.5	5.8	9.5	82.2	17.8
Շիրակ	12.3	7.5	12.3	85.2	14.8
Սյունիք	7.3	4.5	7.3	70.2	29.8
Վայոց ձոր	1.2	0.7	1.2	81.1	18.9
Տավուշ	2.6	1.6	2.6	79.9	20.1
Ընդամենը ՀՀ	163.9	100.0	149.5	77.9	22.1

Բնակչությանը տրված փաստացի ջրի քանակն ըստ մարզերի, 2003թ., %-ով ընդհանուրից




Բնակչությանը տրված փաստացի ջրի քանակը, 1970-2003թթ., մլն.լիտր.մ



2003թ. ջրի կորուստը կազմել է ցանցին տրված ջրի ընդհանուր ծավալի 72.0%-ը, Երևան քաղաքում՝ 75.8%-ը: Ջրի կորուստների հիմնական պատճառը ջրագծերի ֆիզիկական մաշվածությունն է: 2003թ. ընթացքում ջրնուղի համակարգում արձանագրվել է 21949 վթար, որից ք.Երևանում՝ 2376:

Ջրօգտագործման և ջրի կորուստների տոկոսային հարաբերակցությունն ըստ մարզերի, 2003թ.



Ֆինանսական ընդհանրացված ցուցանիշները, 2003թ., մլն. դրամ

Սուտքեր, ընդամենը	15017.0
ջրի իրացումից	8234.5
որից՝ բնակչությունից	4557.7
Ծախսեր, ընդամենը	10548.1

2003թ. հանրապետությունում ջրի իրացումից ստացված փաստացի մուտքերի 55.3%-ը բնակչությունից հավաքագրվածն է:

Հանրապետությունում ջրի իրացումից տարիների ընթացքում կուտակվել է 16501.8 մլն. դրամի պարտք, որի 87.5%-ը կան 14439.2 մլն. դրամը կազմել է բնակչության պարտքը: